Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1957-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«.....» «.....» 2026 թվականի N ..... -Ն

????????? ????????????? ???????????? 2025 ??????? ?????????? 25-? N 1957-? ??????? ??? ??????????? ????????? ?????

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «ՀՀ կառավարության մի շարք որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N1957-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«
6.Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 19-ի «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության ու պետական, բյուջետային հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի տարածքների, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող բնակելի տարածքների նվիրատվության և հանրակացարանային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմիններին նվերը և նվիրաբերությունն ընդունելու լիազորություններ վերապահելու մասին» N 2037-Ն որոշման N

3 հավելվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված անձանց դիմումները քննվում են նույն որոշմամբ սահմանված կարգով, եթե վերջիններս 26.12.2025 թվականի դրությամբ հանդիսացել են շահառու և ներկայացված փաստաթղթերով հաստատվում է նրանց համապատասխանությունը տվյալ օրվա դրությամբ շահառու լինելու պայմաններին։ Ընդ որում նշված անձանց դիմումները ենթակա են քննության, եթե դրանք ներկայացվել են մինչև 2027 թվականի հունվարի 1-ը՝ բացառությամբ այն անձանց, որոնք անհատույց օգտագործման իրավունքով բնակվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ որպես սոցիալական բնակարանային ֆոնդ օգտագործելու նպատակով հատկացված բնակարաններում։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն.ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան